ՆՈՐԱԲԱՑ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԲԱՐԵԲԱՐ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

«ԵՐԵՎԱՆՅԱՆՆԵՐ» ՐՎՄՇՏՍՊ ԿՈՒՄՄՈՒՆԻՏՈՒՄՆԵՐ

ԷՋՄԻԱԾՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑՎԵՑ ՆՈՐ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ

Սեպտեմբերի 28-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հարևանությամբ, Ներսիսյան անտառում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ ընդարձակ խաղահրապարակի հանդիսավոր բացումը:

Ամերիկահայ բարերարներ տեր և տիկին Հարոլդ և Ջոզեֆին Գուլամերյանների հովանավորությամբ և «Գուլամերյան հիմնադրամի» նախագահ Մայքլ Հարաթունյանի ջանքերով կառուցված բացօթյա խաղահրապարակում մանուկների հանգստի համար ստեղծված են հրաշալի պայմաններ:

Նորին Սրբությունը, Էջմիածնի քաղաքապետ Հրաչիկ Աբգարյանը և տիար Մայքլ Հարաթունյանը կտրեցին խաղահրապարակի մուտքը երիզող ժապավենը, որից հետո կատարվեց օրհնության հատուկ կարգ: Արարողության ավարտին Հայոց Հայրապետն իր գնահատանքի խոսքն ուղղեց մեծազնիվ բարերարներին, Էջմիածնի քաղաքային իշխանություններին և ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանին, ովքեր իրենց անմիջական ներդրումն ու աջակցությունն են բերել խաղահրապարակի շինությանը: «Վստահ ենք, որ այս խաղահրապարակը պիտի մեծ ուրախություն պատճառի Էջմիածին քաղաքի մանուկներին, և նրանց շուրթերով պիտի օրհնվեն բոլոր այն անձինք, ովքեր նպաստեցին այս խաղահրապարակի կառուցմանը»,- նշեց Վեհափառ Հայրապետը:

Բացման արարողությունից հետո ներկաներն ունկնդրեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող Հայորդյաց տների սաների համերգային ծրագիրը:

Խաղահրապարակի բացմանը ներկա էին նաև Մայր Աթոռի միաբաններ, ԱՄՆ Արևելյան թեմից Հայաստան ժամանած ամերիկահայ ուխտավորներ և Էջմիածին քաղաքի բնակիչներ: